

ԹԵՎՐԱՆ, 21 (ԱՅՓ).- Իրան քննադատեց Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքի իսլամական լայակը արգիլող «ծայրայեղական որոշումը»: Արտաքին գործոց նախարարության բանբեր Համիտ Ռեզա Ասեֆի ըստ, որ Ֆրանսայի դպրոցներում մէջ իսլամական լայակն ու կրօնական այլ երեւոյթներ արգիլող որոշումին նպատակն է արգիլել իսլամական արժէքներուն տարածումը Ֆրանսայի մէջ: Ան աւելցուց, որ այս որոշումը կը հակադրուի մարդկային քաղաքացիական իրաւունքներուն, ինչպէս նաեւ՝ կը նուստացնէ Ֆրանսայի դիմագիծն ու վարկը իսլամական աշխարհին մէջ: Ասեֆի ֆրանսական կառավարութեան կողմէն ուղղեց բեկանջու որոշումը՝ նկատի ունենալով Ֆրանսայի իսլամներուն աւանդութիւններն ու մշակոյթը:

### ՈՒՍՏԻ ՄԷՋ

## ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՏԵՍԱԿՑԵՑԱՒ ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ԹԱԳԱՌՈՐԻՆ ՀԵՏ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ առաւօտ մեկնեցաւ Սէնտական Արաքիա, ուր յետմիջօրէին տեսակցեցաւ Ֆահտ պըն Ապտէլ Ալիյ թագաւորին հետ: Հանդիպումին քննարկուեցան շրջանային վերջին իրադարձութիւնները, յատկապէս պաղեստինեւիսրայէլեան եւ Իրաքի վարգաճումներուն գծով, ինչպէս նաեւ Պէյրութ-Ռիատ երկկողմանի յարաբերութիւնները: Նշենք, որ վարչապետ Հարիրի Շաբաթ գիշեր հասած էր Լիբանան՝ Ռիատի մէջ Սէնտական Արաքիոյ գահաժառանգ իշխան Ապտալա պըն Ապտէլալիյի հետ հանդիպում մը ունենալէ ետք: Հանդիպումին քննարկուած էին շրջանային իրադարձութիւնները: Ան երէկ դարձեալ մեկնեցաւ Ռիատ:

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԴՈՒԼԸ ԱՅՍՕՐ ԿԸ ԹԵԿԱԿՈՒՄԷ ԻՐ 35ԴԴ ՕՐԸ

Լիբանանեան Համալսարանի Դասախօսներու Լիկայի յայտարարած բաց դասադուրը, որ արդէն իսկ ամբողջացուց իր 34րդ օրը, պիտի շարունակուի մինչեւ որ կառավարութիւնը ընդառաջէ դասախօսներու պահանջներուն եւ համալսարանին տրամադրէ հարկ եղած գումարը, որպէսզի երկրին կրթական համակարգը չվտանգուի եւ պահէ իր մակարդակը: Լիբանանեան Համալսարանի դասախօսներու լիկայի վարչական խորհուրդը երէկ կազմակերպեց երեք նիստեր, որուն ընթացքին քննարկումի ենթարկեց համալսարանին կարիքները եւ ուսուցիչներուն պահանջները, վստահեցնելով, որ դասադուրը պիտի շարունակուի: Խօսք առաւ լիկայի վարչական խորհուրդի անդամ տոքթ. Իսամ Խալիֆէ, որ կոչ ուղղեց վերակենդանացնելու համալսարանը եւ անոր ընծայելու իր անկախութիւնը: Նշենք, որ դասախօսներն ու արդէն իսկ համալսարանի կեդրոնատեղիին առջեւ ցոյցեր կատարող ուսանողները այսօր նստացուց մը պիտի կատարեն կառավարութեան Թանգարանի շրջանի կեդրոնատեղիին առջեւ: Նշենք, որ Սայտայի մէջ երէկ ցոյցեր կատարեցան, կազմակերպութեամբ Լիբանանեան Համալսարանի ուսանողներուն, որոնք պօրակցեցան Համալսարանի դասախօսներուն պահանջներու գործադրութեան համար կատարուած բաց դասադուրին եւ պահանջեցին Համալսարանին «անկախացումը», մերժելով հոն տիրող որեւէ քաղաքական ուժի ներկայութիւնը:

## ՍՍՏՏՍ ՅԻՄՆԵՆԻ ՏԱՊԱԼՈՒՄԸ ԵՏՔ

## ԱՐԱՔԱԿԱՆ ԼԻԿԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՌԱՋԻՆ ԱՆՔԱՄ ԸԼԼԱԼՈՎ Կ ԱՅՅԵԼԷ ԻՐԱՔ

Սատտամ Հիւսէյնի իշխանութեան տապալումէն ի վեր, առաջին անգամ ըլլալով Արաքական Լիկայի պատուիրակութիւն մը Պաղտատ կ'այցելէ, յայտնեց իշխող խորհուրդի բանբեր Երէկ: Պատուիրակութիւնը, զոր կ'առաջնորդէ Լիկայի ընդհանուր քարտուղարի օգնական Վոր. Ահմէտ Պըն Հըլի, Չորեքշաբթի օր տեսակցութիւն պիտի ունենայ իշխող խորհուրդի անդամներուն հետ: Երէկ պատուիրակները հանդիպում ունեցան գաղթականներու նախարար Մոհամէտ Ժաւիտի հետ: Սատտամը, ու վայն թմբեցնելէ ետք՝ իսկական ձեռքարկումներու մասին խորհուրդը զգուշացուց: Արտասահմանի իրաքցիները դժուարութիւններ կը դիմագրաւեն իրաքեան դեսպանատունէրու փակման պատճառով: Միւս կողմէ, Սպա-

ԵՐՈՒՍԱՎԷՄ, 21 (ԱՅՓ).- Իսրայէլ կը ծրագրէ գործողութիւն մը՝ կործանելու համար Իրանի կորիպային կարողականութիւնը, յայտնեց պաշտպանութեան նախարար Շաուլ Մոֆապ: Մոֆապ դիտել տուաւ, որ ներկայիս Իրան կը նկատուի հրէական պետութեան թիւ մէկ թշնամին: Ան աւելցուց, որ եթէ որոշում տրուի Իրանի կորիպային կեդրոնները քանդելու, Իսրայէլ անհրաժեշտ բոլոր միջոցառումներուն պիտի ձեռնարկէ երաշխաւորելու համար իրանցի քաղաքացիներու ապահովութիւնը: Իրան ծնած Մոֆապ ըսաւ նաեւ, որ Թեհրանի ահաբեկչութիւն կը հովանաւորէ:

## ՀԱԲԱՔԱԿԱՆ ԲԱՆՂՈՒՄԻ ԶԵՆՔԵՐՈՒ ՀԱՐՑՈՎ

## ԼԻՊԻԱ ԱՆԱԿՆԿԱԼԻ ՄԱՏՆԵՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԸ

Լիպիա անակնկալի մատնեց միջազգային ընտանիքը, երբ տարիներու հերքումէ ետք, շաբաթավերջին խոստովանեցաւ, թէ հաւաքական քանդումի վէճեր ունի եւ թէ անոնցմէ պիտի ձերբազատի: Լիպիոյ ղեկավար Մուամմար Քադաֆի յայտարարեց, որ յետայսու Թրիփոլի պիտի առաջնորդէ երկիրները, որոնք կ'աշխատին աշխարհը մաքրագործելու համար հաւաքական քանդումի վէճերէն: Արտաքին գործոց նախարար Ապտէլ-Նահման Շալիամ Ուրբաթ երեկոյեան յայ-

տարարած էր, թէ կը հրաժարի հաւաքական քանդումի վէճերու պատրաստութիւնը հետապնդող ծրագիրներէն: Յայտարարութիւնը արդիւնքն էր ինսամուտայնականութիւններու՝ Լոնտոնի եւ Ուաշինկթընի հետ: Արտաքին գործոց փոխ նախարարը իր կարգին ըսաւ, որ Լիպիա կը փափաքի նոր էջ մը բանալ Արեւմուտքի հետ փոխ յարաբերութիւններուն մէջ: Ան կ'ակնարկէր յատկապէս Միացեալ Նահանգներուն:



Քադաֆի Ուաշինկթընի հետ բանակցութիւններուն

ընթացքին Լիպիա մանրամասն տեղեկութիւններ փոխանցած է ոչ աւանդական վէճերու ծրագիրներուն մասին: Լիպիա կարեւոր տեղեկութիւններ փոխանցած է նաեւ «Քայիտա»ի հարիւրաւոր գործակալներու եւ իսլամական ծայրայեղականներու մասին: Լիպիոյ յայտարարութիւնը խանդավառութեամբ ողջունուեցաւ շրջանային ու միջազգային ղեկավարներու կողմէ:

● ԵԳԻՊՏՈՍԻ նախագահ Հիւսնի Մուպարաբ ողջունելէ ետք Լիպիոյ կեցուածքը, կոչ ուղղեց Իսրայէլի, որպէսզի ինք եւս փճացնէ հաւաքական քանդումի վէճերը: ● ԻՐԱՆ եւս պահանջեց, որ միջազգային ընտանիքը ճնշում բանեցնէ Իսրայէլի վրայ, որպէսզի հետեւի Լիպիոյ օրինակին: ● ՔԱԹԱՐ եւ Պահրէյն ողջունեցին Լիպիոյ յայտարարութիւնը եւ մաղթեցին, որ Իսրայէլի վրայ ալ ճնշում բանեցուի, որպէսզի փճացնէ վէճերու ծրագիրները: (ԱՅՓ)

## ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՒԺԵՐ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՆ ԴԷՄ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Իսրայէլեան ուժեր կը շարունակեն գործողութիւնները պաղեստինեան շրջաններուն դէմ, ուր զոհերու եւ վիրաւորներու թիւը կը բարձրանայ: Մյուս յորհանրակներու քաղաքի Պալաթա գաղթականներին մէջ, իսրայէլեան ուժեր սպաննեցին հնգամեայ պաղեստինցի մանչուկ մը: Ականատեաններ եւ ապահովութեան աղբիւրներ

հաղորդեցին, որ Մոհամէտ Արժա սպաննուեցաւ փողոցը, ուր բախուել տեղի կ'ունենար իսրայէլացի զինուորներու եւ պաղեստինցիներու միջեւ, որոնք քարեր կը նետէին զինուորներուն վրայ: Կազախի Ռաֆահ շրջանին մէջ, իսրայէլեան բանակը, գիշերային ներխուժումի մը ընթացքին քանդեց պաղեստինեան եօթը

բնակարաններ, յայտնեցին պաղեստինեան ապահովութեան աղբիւրներ: Իսրայէլեան աղբիւր մը ըսաւ, որ զինուորները քանդած են երկու բնակարաններ, ուրկէ հակաիսրայէլեան գործունէութիւն կը տարուէր: Մինչ այդ, Իսրայէլի կառավարութիւնը կը քննարկէ վարչապետ Արիէլ Շարոնի միապետութեան միջոցառում-

ներու ծրագիրը, որ իրեն սպառնալիք կը գործածուի պաղեստինցիներուն դէմ: Փոխ վարչապետ Էհուտ Օլմէրթ դիտել տուաւ, որ կառավարութիւնը մեծ դժուարութիւններ պիտի դիմագրաւէ, եթէ որոշէ պարպել պաղեստինեան հողերու վրայ կառուցուած բնակեցման վայրեր: Օլմէրթ կը նախատեսէ բնակեցման վայրերու բնա-

կիչներուն հետ սուր բախում մը: ● «ԵՏԻՈԹ ԱՎՐՈՆՈԹ» օրաթերթին կողմէ հրատարակուած լուրի մը համաձայն, Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ իսրայէլացի թղթակիցի մը ըսած է. «պէտք է ձերբազատիք պաղեստինցի ղեկավար Եսաէր Արաֆաթէն»: (ԱՅՓ)

## ՍՍՏՏՍ ՅԻՄՆԵՆԻ ՏԱՊԱԼՈՒՄԸ ԵՏՔ

## ԱՐԱՔԱԿԱՆ ԼԻԿԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՌԱՋԻՆ ԱՆՔԱՄ ԸԼԼԱԼՈՎ Կ ԱՅՅԵԼԷ ԻՐԱՔ

Սատտամ Հիւսէյնի իշխանութեան տապալումէն ի վեր, առաջին անգամ ըլլալով Արաքական Լիկայի պատուիրակութիւն մը Պաղտատ կ'այցելէ, յայտնեց իշխող խորհուրդի բանբեր Երէկ: Պատուիրակութիւնը, զոր կ'առաջնորդէ Լիկայի ընդհանուր քարտուղարի օգնական Վոր. Ահմէտ Պըն Հըլի, Չորեքշաբթի օր տեսակցութիւն պիտի ունենայ իշխող խորհուրդի անդամներուն հետ: Երէկ պատուիրակները հանդիպում ունեցան գաղթականներու նախարար Մոհամէտ Ժաւիտի հետ: Սատտամը, ու վայն թմբեցնելէ ետք՝ իսկական ձեռքարկումներու մասին խորհուրդը զգուշացուց: Արտասահմանի իրաքցիները դժուարութիւններ կը դիմագրաւեն իրաքեան դեսպանատունէրու փակման պատճառով: Միւս կողմէ, Սպա-

նիոյ վարչապետ Խոսէ Մարիա Ասնար Շաբաթ օր անակնկալ այցելութիւն մը տուաւ Իրաք գտնուող սպանացի զինուորներուն: Ասնարի կ'ընկերակցէր բարձրաստիճան պատուիրակութիւն մը: Ասնար հանդիպում ունեցաւ սպանացի 3500 զինուորներուն հետ, որոնց դիմաց խօսք մը արտասանելով դրուատեց անոնց աշխատանքը, որ կ'իյնայ արդար առաքելութեան մը ծիրէն ներս: ● ՔՐՏԱԿԱՆ աղբիւրներ հաղորդեցին, որ քիւրտ զինուորներ նախ ձերբակալած են Սատտամը, ու վայն թմբեցնելէ ետք՝ իսկական ձեռքարկումներու մասին խորհուրդը զգուշացուց: Արտասահմանի իրաքցիները դժուարութիւններ կը դիմագրաւեն իրաքեան դեսպանատունէրու փակման պատճառով: Միւս կողմէ, Սպա-



այցելութեամբ մը: Ան տեսակցութիւն պիտի ունենայ նախագահ Պաշտար Ասատի հետ ու ապա Մոսկուա պիտի ուղղուի: ● ԻՐԱՆ դատապարտեց Իրաքի մէջ ձերբակալուած ընդդիմադիր Մուսաիպիսի հե-

տեւորներ այլ երկիրներ տեղափոխելու ամերիկեան որոշումը: Թեհրան կը պահանջէ, որ բոլորը Իրանի արտախանսուին: (ԱՅՓ)

### ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ՇԻՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻՆ ԿՈՂՍԵ

Ուրախութեամբ կ'ուզենք յայտնել, որ Կաթողիկոսարանը որոշած է 70 յարկաբաժիններ ներառող չորս շենքեր շինել Ֆամարի «Լեյլա» համալիրին կից գտնուող հողաշերտին վրայ: Շինութիւնները պիտի սկսին Յունուար 2004ին եւ պիտի աւարտին շուրջ մէկ տարին: Յարկաբաժինները պիտի ըլլան երկու չափի՝ երկու սենեակ - մէկ հիւրարահ եւ մէկ սենեակ - մէկ հիւրարահ, իրենց յարակից բաժիններով: Շինութեան որակը պիտի ըլլայ միջակ վեր:

Մեր ժողովուրդի զաւակներուն ցուցաբերելիք հետաքրքրութեան լոյսին տակ յարկաբաժինները թէ՛ ծախելու, թէ՛ վարձու տալու կարելիութիւններ պիտի ստեղծուին:

Շտաբըրըրուները կրնան ներկայացնել Կաթողիկոսարանի դիմումագրերը պրն. Սաշիկ Տետեանին, Աճախարհի Մայրավանդը, Թուակառու մինչեւ 15 Յունուար 2004, ամէն օր ժամը 10:00էն 12:00:

ԴԻՄԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

### ՄԱՀԱԶԴ

Ռաֆիք Շիլա եւ ընտանիք  
Ժողէֆ Շիլա եւ ընտանիք  
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր եւ Հարգատիւն

### ՍԻԼՎԻ ՇԼԵԼԱՅԻ (Ծնեալ՝ Պարհուլ)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 21 Դեկտեմբեր 2003ին: Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 22 Դեկտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Տրպալայի «Սուլուտ» եկեղեցւոյ մէջ:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահագոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին «Սուլուտ» եկեղեցւոյ սրահին մէջ, Երկուշաբթի 22, Երեքշաբթի 23 եւ Չորեքշաբթի 24 Դեկտեմբերին:

### ՄԱՀԱԶԴ

Տիար Արշակ Ճէմճեմեան  
Տէր եւ տիկին Յովսէփ Նանճեմեան եւ զաւակունք  
Տիկին Միլվա Ճէմճեմեան եւ զաւակունք  
Տիկին Արփի Առաքեյեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Յակոբ Քրիփէյեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Քէթիկ Թորոսեան

Տիկին Եսթեր Թորոսեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Արա Պատիկեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Պողոս Գասպեան եւ զաւակունք  
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, քրոջ, մեծ մօր եւ Հարգատիւն

### ՍՐԲՈՒՆԻ ՃԵՄՃԵՄԵԱՆԻ (Ծնեալ ԹՈՐՈՍԵԱՆ, Ատանա, 1914ին)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 21 Դեկտեմբեր 2003ին: Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 22 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 1:15ին, Մարաշի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահագոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Պուրճ Համուտ, «Ճոն Մայրը» փողոց, «Պետիրեան» շէնք, 2րդ յարկ, Երկուշաբթի 22 եւ Երեքշաբթի 23 Դեկտեմբերին:

### ՄԱՀԱԶԴ

Տիկին Մարի Պալեան  
Տիար Լեւոն Պալեան  
Տէր եւ տիկին Յարութիւն Պալեան եւ զուստրը  
Տիար Ղազարոս Պալեան  
Տէր եւ տիկին Հայկ Նիտէյեան եւ զաւակունք  
Տիկին Ալիս Յովսէփեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Էտուարտ Շնորհաբեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Էտուարտ Չէլպէրի  
Օրիորդ Նուարդ Չէլպէրի  
Տէր եւ տիկին Ջաւէն Դաւիթեան  
Տէր եւ տիկին Ջոզապ Չէլպէրի  
Տէր եւ տիկին Ժան Նաչիբեան եւ զաւակունք  
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, եղբոր, հօրեղբոր եւ Հարգատիւն

### ԿԱՐԱՊԵՏ ՊԱԼԵԱՆԻ (Ծնեալ՝ Պէլրուք, 1935ին)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 18 Դեկտեմբեր 2003, Երեկոյան ժամը 8:00ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, 21 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ուրկէ Հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրան Շրպէլի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահագոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին Ս. Յակոբ եկեղեցւոյ «Տիրան Պապիկեան» սրահին մէջ, Կիրակի 21 եւ Երկուշաբթի 22 Դեկտեմբերին, կէսօրէ ետք ժամը 3:00էն 7:00ը:

## ՀԱՄԱՍԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 16ՐԴ ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ ԵՈՒՆԵՍԵՐՈՅԻ ՄԷՋ

Համաս շարժումի հիմնադրութեան 16ամեակին առիթով երէկ Լիբանանի մէջ Համասի ղեկավարներու կազմակերպութեամբ ԵՈՒՆԵՍԵՐՈՅԻ մէջ տեղի ունեցաւ հանդիսութիւն մը, որուն ներկայ գտնուեցան նախկին վարչապետ Սելիմ Հըս, Ընկերվար Յաւաթիմական Կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ուալիտ Ժոնայիսի ներկայացուցիչ Ալաէտտին Թրո, Հրկայալայի փոխ ընդհանուր քարտուղար շէյխ Նայիմ Քասէմ, նախկին նախարար Խամ Նաման, բանակի հրամանատարի ներկայացուցիչ Վոր. Աթէֆ Չըղէյա, իրանական կուսակցութիւններու եւ պաղեստինեան կազմակերպութեան ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Լիբանանի մէջ իրանեան ղեկավարութեան ներկայացուցիչ Մոհամէտ Հիւսէյն Յատլայա:

Հանդիսութեան խօսք արտա Հըս, որ կոչ ուղղեց շարունակելու դիմադրութիւնը եւ պաղեստինեան ինքիֆատան, ամրապնդելով ազգային միասնականութիւնը, մինչեւ պաղեստինցի ժողովուրդին բոլոր նպատակներուն իրականացումը: Ան շեշտեց նաեւ, որ հարկ է արար ղեկավարներու նաեւ պարտադրել, որ իրենց օժանդակութիւնը բերեն պաղեստինեան ինքիֆատային, այլ խօսքով՝ պաղեստինեալիքեան տազնապի վերջնական լուծման:

Իր կարգին, շէյխ Քասէմ յայտնեց, որ Լիբանան պիտի մնայ Իսրայէլի արգելք հանդիսացող պարիսպը եւ պիտի չժողովի իր կամ շրջանի երկիրներուն վրայ պարտադրուող քաղաքականութեանց իբրեւ անցք:

Երեսփոխան Թրո իր խօսքին մէջ շեշտեց, որ հարկ է պաղեստինեան ինքիֆատան միասնականացնել մէկ ճակատի վրայ: «Թշնամի Իսրայէլ անձնասպանական գործողութիւններէ եւ անձնազոհութենէ բացի այլ լէյուէ չի հասկնար», աւելցուց ան:

Հանդիսութեան ամրապնդ խօսք արտա նաեւ Լիբանանի մէջ Համաս շարժումի քաղաքական գրասենեակի նախագահ Խալէտ Մաշալ, որ ընդգծեց, թէ Համաս շարժումը պիտի շարունակէ իր դիմադրութիւնը, մերժելով Ժընեւի նախաձեռնութիւնը եւ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի առաջարկը: Ան շեշտեց, որ Իսրայէլացիներուն համար ապահովական ոչ մէկ կայունութիւն կրնայ ըլլալ, որովհետեւ պաղեստինեան ինքիֆատան պիտի շարունակուի մինչեւ ազատ եւ անկախ Պաղեստինի ստեղծումը:

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՀԱՆՐՕԳՈՒՏ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեժիպ Միքաթի երէկ հովանաւորեց Պրտնայէլ քաղաքապետութեան ենթակառուցի ծրագիրը, ներկայութեամբ քաղաքական եւ բարձրաստիճան անձնաւորութիւններու, ինչպէս նաեւ քաղաքապետարաններու եւ թաղապետերու:

● ԵՐԵՍՓՈՒՍԱՆ Քասէմ Հաշէմ երէկուան իր յայտարարութիւններուն մէջ րաւ, որ երկրին մէջ տիրող կայուն մթնոլորտը Լիբանանի քաղաքացիներուն եւ կառավարութեան միջեւ դրական է: Ան կոչ ուղղեց կառավարութեան լուծում գտնելու Լիբանանեան Համալսարանի դիմագրաւած տագնապին եւ զործարդելու դասախօսներուն պահանջները:

● ԵՐԵՍՓՈՒՍԱՆ Պուրթուս Հարպ երէկ պարմանք յայտնեց Լիբանանեան Համալսարանի պահանջներուն հանդէպ կառավարութեան կողմէ ցուցաբերուած անտարբերութեան մասին: Ան րաւ, որ շարքաներէի վեր համալսարանները փակ են, ինչ որ երկրին կրթական մակարդակին կը վնասէ այս իրականութիւնը:

TECHNICAL COLLEGE  
MIESROBIAN  
2003 - 2004  
Second Session  
OPENING  
Computer :  
17 December  
English & Foreign Languages:  
22 December  
Registrations at:  
Bourj Hamoud - Arax St. - Tel: 01-260504 - Fax: 262955 - www.mesrobian.com

### ԾԱԽՈՒ ԸՈՂ Այնճարի մէջ: Հեռ. 01-262599:

### ԿՈՒՉՈՒԻ Պղտիկներու հագուստի վաճառատուն մը, կարիքը ունի:

1) Մտտելիքի մը, փորձառութիւնը պայման:  
2) Ցուցադրարարի մէջ աշխատող փորձառու վաճառորդուհի մը, վճարման լաւ պայմաններ:  
Հեռ. 03/244993, 01/268301 եւ 01/269539:

### BNPI ԴՐԱՄԱՏԱՆ ՆՈՐ ՄԱՍՆԱԳԻՂՈՒՄ «DRIVE-THRU ATM»ՈՎ, ՏՈՐԱՅԻ ՄԷՋ

BNPI կը հաստատուի իր ճոր մասնաճիւղին մէջ, Տորա: Յուսալով միշտ լաւագոյն ծեւով ծառայել իր յաճախորդներուն: BNPI Տորայի մէջ կը հաստատուի «Drive-Thru ATM»ը դրամատնային գործունեութիւնը դիւրացնելու համար:  
BNPI դրամատուն Տորա, Սանթրո Վարդանեան: Տորա մայրուղի, Գեո.01 / 246795 / 6 / 7 / 8 / 9

Կազմակերպութեամբ  
Շ. Յ. Դ. ԼԵՍԻ  
ԿԵՂՈՆԱԿԱՆ ԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ  
Պրովէի պետական քննութեանց հայկական վարժարաններու բարձր միջեր ապահոված աշակերտներու  
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 26 Դեկտեմբեր 2003ին, Երեկոյան ժամը 8:00ին, «Շ.Ս.Ը.Ս. Աղբալեան» մարզամշակութային համալիրի «Մեր թովմասեան» սրահին մէջ, Սրգիւր:  
ԵՐԱԿԵՐ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր սիրելի ժողովուրդի զաւակներուն կ'ուզենք յայտնել, թէ Ազգային Առաջնորդարանը ծրագրած է Լիբանանի Ազգային գերեզմանատուներու իրավիճակը կարգաւորել եւ բարեկարգել:  
Այս ծրագիրին սկզբնական եւ կարեւոր բաժինը կը կազմէ դամբարաններու կալուածագիրներու ստուգումը եւ կարգաւորումը:  
Բոլոր այն ազգայինները, որոնք Ազգ. գերեզմանատան դամբարանի կալուածագիր ունին, իրենց անուան կամ անմիջական հարազատին անուան եւ կամ հեռու բարեկամի մը անուան (բայց իրենց բով պահ դրուած) պարտին շրջանի եկեղեցւոյ թաղականութեան գրասենեակը ներկայացնել ամէն օր կէսօրէ առաջ ժամը 9:00էն 12:00 եւ ներկայացնել:  
1.- Դամբարանի կալուածագիրի լուսապատճէնը:  
2.- Դամբարանի կալուածագիրի անուանատիրոջ ընտանեկան իխրաժ քայտի լուսապատճէնը:  
3.- Դամբարանի կալուածագիրի անուանատիրոջ ժառանգութեան իրաւասութիւնը ունեցող անձին անունը, ժառանգական կապը հաստատող ընտանեկան իխրաժ քայտ, հասցեն եւ հեռաձայնի թիւերը:  
4.- Կալուածագիրի անուանատիրոջ կամ անմիջական ժառանգորդի երկրէն դուրս բացակայութեան պարագային արտասահմանի հասցեն, հեռաձայնի թիւը, Ե-ճամակ եւ անուանատիրոջ հետ ժառանգական կապը հաստատող փաստաթուղթեր:  
5.- Կարելի եղած չափով արձանագրել տուեալ դամբարանի մէջ թաղուած անձերուն անունները, ազգականական կապը եւ թաղման թուականները:

ԾԱՆՕԹ.- Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել:  
ԴԻՄԱՆ ԱՉԱՅԻՆ ԱՆԱՋՆՈՂՂՈՂՈՒՆ

Մի մոռնար  
Կաղանդ Պապայէն  
Խնդրելու  
ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿԻ  
ԳԱԽԱԹԸ  
ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ  
ԼԱԽԱԳՈՅՆ ՆՈՒԵՐԸ  
Գաղաթները կարելի է գտնել հետեւեալ գրախանութներուն մէջ  
- Բանապային, Ճաղոյեան կեդրոն, Պուրճ Բամուտ  
- Նարեկայի, Պուրճ Բամուտ  
- Obelix, Անթիլիաս

ԴԻՄԱՒՈՐԵՆՔ ՆՈՐ ՏԱՐԻՆ  
«ԱՐԲԱԵԱՆ - Շ. Ս. Ը. Ս.» ՍԱՐՁԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԼԻՐԻՆ ՄԷՋ  
ԿԵՐԳԵՆ  
ԸՐԱՉ ԿԱՅԵԱԿԵԱՆ  
BIG JACK  
ՇԱԲԷ ՊԱՐՏԱՍԱՐԵԱՆ  
Մասնակցութեամբ՝  
Saxophonist MARIOH  
Ընկերակցութեամբ՝  
ՍԵՂՕ ՊԱՐՏԱՍԱՐԵԱՆԻ  
Եւ իր նուագախումբին  
● ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՆԻԿ ԵՒ ԽԱՆՂԱԿԱՆ ՄԹՆՈՒՆՈՐՏ  
● ՀԱՄԱՂԱՄ ԵՒ ԲԱՋԱՍՏԵԱԿ ՃԱՃԵՐ  
● ՀԱՃԵԼԻ ԱՆԱԿԱԿԱՆԵՐ  
● ՍԱԿ՝ 40 ԱՄ. ՏՈՒՆ, ՅԱՏՈՒԿ ԳԻՆ ՓՈՔԵՐՈՒՄ  
ՏԵՂԵՐԸ ԱՊԱՇՏՈՒՄԵՆ ԿԱՄԱՐ ԸՆՈՋԱՋՅԵԼ  
03-351.353 եւ 04-722902/3

**ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ**  
ԺՈՂՈՎՐԳԱՊԵՏՈՒԹԻՒՆ  
Պ. Ե. ԸՆՁ. 01- 261505

**ԾՆՈՒՆԴ ՏԵԱՆՆ ՍԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ**  
ԲԻՒՍՈՍԻ

Ս. Փրկիչ եկեղեցւոյ ժողովրդապետութիւնը սիրով կը հրաւիրէ հաւատացեալ ժողովուրդը, մասնակցելու հանդիսաւոր Ս. պատարագին զոր պիտի մատուցանէ եւ աւուր պատշաճի քարոզէ՝

**ԱՐԿԻ. Ե. ՅՈՎԿԱՆՆԵՍ ԵՊՍ. ԹԵՅՐՈՒՉԵԱՆ**  
Չորեքշաբթի, 24 Դեկտեմբեր 2003, ժամը 10:00ին:

**ՄՈՆԻՏՐԱԿԱՆ ՎԱՆԱՅ ՍՓՈՐ**

Նոր յայտագիրներու ծիրին մէջ 1 Յունուար 2004ԷՆ սկսեալ «Վանայ Չայն»-ը շաբաթական հերթականութեամբ պիտի ձայնասփռուի «ՄՈՆԻՏՐԱԿԱՆ ՎԱՆԱՅ ՍՓՈՐ» ԽՆԱՂ - ՄՐՅԱՆԸԸ, որուն մասնակցները Մոնտիալի դրութեամբ պիտի մրցին իրարու դէմ եւ վերջաւորութեամբ առաջին երեք դիրքերը գրաւողները պիտի ստանան արժեքաւոր նուէրներ:

Անոնք, որոնք կը փափաքին մասնակցիլ այս մրցանքին, պէտք է որ մինչեւ Երեքշաբթի, 30 Դեկտեմբեր 2003 հեռաձայնեն «Վանայ Չայն»՝ 01-267657 եւ 01-241199 քիւրուին, արձանագրուելով քարտուղարութեան մօտ:

**ԱԾԱՊԱՐԵՅՔ ԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԵՔ**  
«ՄՈՆԻՏՐԱԿԱՆ ՎԱՆԱՅ ՍՓՈՐ»-ԻՆ

**ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Ե**  
**ԿԻՆԻԿԻՍ ԲԱՌ-ԽԱՂ**  
**ՀԱՅԵՐԵՆ ՍՐԱԲԼԷ**

**ԱՅՆՆԱՐԻ ՄԵՉ**

**ՅՈԳԵՅԱՆԳՍՏԵԱՆ**  
**ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ՝**  
**ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԵՐՊԵԹՆԵԱՆԻ**  
**ՄԱՅՈՒՄԱՆ ԱՌԻԹՈՎ**

Հ. Յ. Գ. «Կարմիր Լեռ» կոմիտէութեան դատարարական յանձնախումբին նախաձեռնութեամբ, Այնճարի նախկին քաղաքապետ Յարութիւն Շերպէթեանի մահուան առիթով երէկ Այնճարի Ս. Պողոս եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, որուն աւարտին «Կարմիր Լեռ» կոմիտէութեան անունով խօսք առին ընկ. Խաժակ Այնթապեան եւ Այնճարի քաղաքապետութեան կողմէ ընկ. Յակոբ Այնթապեան:

Ապա «Սարգիս Ելիթեան» ժողովրդային տան մէջ կոմիտէութեան եւ քաղաքապետութեան անդամներն ու հանգուցեալին ընտանիքը ընդունեցին ցաւակցութիւններ:

Յարութիւն Շերպէթեան 17 Դեկտեմբեր 2003ին մահացած էր Միացեալ Նահանգներու մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան: Ան Այնճարի քաղաքապետի պաշտօնը վարած է 1963էն 1990:

**ՔԱՆԻ ՄԸ...**

Ծարուակուած 2րդ էջէն

- ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ միւլթի Մոհամէտ Ռաշիտ Բապպանի երէկ Պէյրութ ժամանեց Ռիատէն, ուր հանդիպում մը ունեցած էր Մէնուական Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտալա Պրն Ապտէլյապիի հետ: Քննարկուած են շրջանային իրադարձութիւնները: Հանդիպումին ետք Բապպանի վստահեցուց, որ
- Ռիատի մէջ պատահած պայթումը ոչ մէկ առնչութիւն ունի իւլանդիանէն հետ:
- ՀԻՒՍԻՍՍՅՅԻՆ Լիբանանի եւ Թրիփոլիի միւլթի շէյխ Մոհամէտ Թահա Մապունահի գլխաւորութեամբ երէկ Թրիփոլի մէջ կայ մակերպուեցաւ հաւաք մը, որուն ընթացքին ներկայութիւնը պարակցութիւն յայտնեցին Մուրիոյ եւ խոստացան անոր օժանդակել ղիմագրաւելու համար Մուրիոյ վրայ բանեցուած ամերիկեան ճնշումները:

**ՊԱՐԻԹՈՆ ԳԵՈՐԳ ԲԵՐԵՄԵԹԼԵԱՆ**  
**ՎԱՅԵԼԵԻ ՊԱՇԵՐ ՇՆՈՐԸՅՑ**  
**ԻՐ ՈՒՆԿԱԴԻՐՆԵՐՈՒՆ**

Լիբանանահայ պարիթոն Գեորգ Քերէմեթեան, որ անցնող տարուան ընթացքին դասական երգեցողութեան ուղարկուելու ներկայացաւ հանրութեան, Շաբաթ, 20 Դեկտեմբերին մատուցեց ծննդեան համերգ մը, որ տեղի ունեցաւ «Մոնիս» թատերասրահին մէջ, Երեկոյեան ժամը 8:30ին:

Գեորգ Քերէմեթեանի այս համերգին յայտագիրը կը բաղկանար երկու մասէ, որուն առաջինը ունէր ծննդեան-հոգեւոր ղիմագիր: Ընկերակցութեամբ հայրենի դաշնակահար Քամիլայի, Գեորգ Քերէմեթեան մատուցեց Շալ Կունտի «Նոէլ»ը, որուն յաջորդեցին Անթոնիօ Սթրատելլայի, Զ. Շ. Հըրկիթի եւ Ժորժ Պիլի հոգեւոր յորիւններէն երգեցողութիւններ: Առաջին բաժինին կիսուն բեմ մուտք գործեց Համալգայիի «Կարկաչ» մանկապատանեկան երգչախումբը, որ խմբավարութեամբ Չաքար Քէշիշեանի, ընկերակցեցաւ պարիթոնի երգեցողութեան: Երգչախումբին հետ Գեորգ Քերէմեթեան կատարեց Սեպար Յրանքի «Փանիս Անճելիքու»ը, Փուլիսիի «Ալէ Մարիան» եւ Հենտրիի «Ճոյ Թու Տը Ուրիս»ը:

Երգահանդէսին երկրորդ բաժինով Գեորգ Քերէմեթեան մատուցեց նախոյիթէն երգեր, որոնցմով ընդհանրապէս կը յատկանշուին արուեստագէտին յայտագիրները, Էննեքօ Տի Քուրթիսի ստեղծագործութիւններէն, ինչպէս նաեւ Վերտիի «Ռիկոլեթթօ» օփերայէն բաժին մը: Յայտագիրին երկրորդ բաժինով եւս «Կարկաչ» բեմ բարձրացաւ Գեորգ Քերէմեթեանի ընկերակցելու համար նախոյիթէն երգերու այլ շարքի մը երգեցողութեան:

Դասական երգեցողութեան այս համերգով Քերէմեթեան ոչ միայն անգամ մը եւս տպաւորեց իր ունկնդիրները, այլ նաեւ յաջողեցաւ անոնց պարգեւել գեղարուեստական վայելքի իսկական պահեր:



**Հ. Յ. Գ. ԶԱԲԱՐԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ**  
**ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՇԱՆԴԵՍ**

Սասնակցութեամբ՝  
**«ԿՈՍԻՏԱՍ» ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲԻՆ**  
ԵՒ ԵՐԳԻՉ ՅՈՎԱԵՓԻ

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 24 Դեկտեմբեր 2003, Երեկոյեան ժամը 9:00ԷՆ սկսեալ, «ՏԵԼԼԵՆՈՒՄ» ձաշարանին մէջ, Սաանըլթիմ:

• Տոմսերը ստանալու համար դիմել՝ Ըամազգայիի գրախանութ. «Ճաղղոյեան» կեդրոն:

Սակ՝ 30 \$

**ALEXANIAN EXCHANGE**  
Bourj-Hammoud  
Armenia Street  
Tel.: (01) 252952 - 252852  
(03) 270755

**ԶԵԼԱ ՄԱՐԿՈՍԵԱՆԻ ԵՒ ՅԱՍԻԿ ԱՖՏԱԼԵԱՆԻ ՏՊԱՒՈՐԻՉ ՆՈՒԱԳԱՇԱՆԴԵՍ**

Համալգայիի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճի հիմնադրութեան 20ամեակին առիթով կայ մակերպուած նախաձեռնութիւններու շարքին, երէկ, Կիրակի, 21 Դեկտեմբերի երեկոյեան ժամը 7:00ին, Սէն ժոյէֆ համալսարանի «Փիեռ Ապու Սաթեր» սրահին մէջ տեղի ունեցաւ դասական յայտագիրով նուագահանդէս մը,



**21" + VCR \$ 319**  
TC-21PS70R: 21" TV, Flat, Stereo + NV-MV20: 2-Head VCR

**25" + DVD \$ 499**  
TC-25PS70R: 25" TV, Flat, Stereo + DVD-S35: Slim DVD, Multi Format

**21" + VCR \$ 339**  
TC-21PS75R: 21" TV, Flat, Stereo, Subwoofer + NV-MV20: 2-Head VCR

**29" + DVD \$ 599**  
TC-29PS70R: 29" TV, Flat, Stereo + DVD-S35: Slim DVD, Multi Format

**Digital Video Camera \$ 549**  
NV-DS60

**Digital Video Camera \$ 689**  
NV-DS65 With SD Card

**DVD Home Theater System \$ 629**  
SC-HT900: 5 Disc Changer, 600W, Multi Format

FREE 5 TAPES + CASE

FREE DVD

From November 1st till December 31st, 2003 - As long as supplies last (All prices include VAT)  
من 1 تشرين الثاني لغاية 31 كانون الأول, 2003 - العرض سري لعين نقد القيمة (الأسعار تشمل ضريبة القيمة المضافة)

**«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՈՐՈՒՄՆ ԵՅՅՏԱԳԻՐՆԵՐԸ**

8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում արաբերէն  
8:45.- «Աստղեր»  
9:00.- «Ռատիօ - Թատրոն».- կը ներկայացնեն Մարի Ռոզ Մանուկեան եւ Մանուէլ Մարգարեան  
9:40.- «Օրուան տոմար»  
10:45.- «Ի՞նչպէս կը տօնէք».- այսօրուան հիւրը է երեսփոխան Յարութ Սայիտ  
11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն  
1:30.- Հայաստանեան լուրեր  
3:00.- «Ի՞նչպէս կը տօնէք» (կրկնութիւն)  
3:00.- Արաբերէն յայտագիր.  
հարցազրոյց պատեթպոլի Հըքմէ խումբի հախկին իսկ այժմ Ռիատի մարզի Ղաւսան Սարգիսի հետ. մանրամասն կ'անդրադառնան Հըքմէն հեռանալուն պատճառներուն եւ կը խօսի Ռիատի հետ ունեցած իր համաձայնութիւններուն մասին  
4:45.- «Բարի երեկոյ Վանայ Չայն».- ուղղակի ձայնասփռում՝ այլազան եւ հետաքրքրական միւլթեր, երգեր, հարցազրոյց եւ այլն  
6:50.- «Օրուան տոմար» (կրկնութիւն)  
7:05.- «Ի՞նչպէս կը տօնէք» (կրկնութիւն)  
7:10.- «Վանայ Սփոր».- անցնող շաբաթուան մարզական լուրերու ներկայացում

որուն ընթացքին ելոյթ ունեցան հայրենի ջութակահար Յասմիկ Աւտայեան եւ լիբանանահայ դաշնակահար Ջելա Մարկոսեան:

Երեւանի Կոմիտասի անուան Պետական երաժշտանոցին հետ Համալգայիի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճին սերտ գործակցութեան ծիրէն ներս տեղադրուող այս նուագահանդէսը կը վայելէր հովանաւորութիւնը Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեանի, որուն կողքին ելոյթին ներկայ էր նաեւ ՄԱՎԵՄԻ Կեդրոնական Մարմնի ատենապետ վեր. դոկտ. Փոլ Հայտոսեան:

Բացման խօսքով հանդէս եկան երաժշտական քոլեճի տնօրէն Երուսաղ Երկանեան եւ վարիչ մարմնի անդամ Ստեփան Էմմիեան, որոնք վեր առին Հայաստանի Պետական երաժշտանոցին հետ գործակցաբար տեղի ունեցող նուագահանդէսին նշանակութիւնն ու կարեւորութիւնը, կատարեցին քոլեճին պատմական եւ ներկայացուցին վոյգ արուեստագէտները:

Հայաստանի տաղանդաւոր երիտասարդ ջութակահարներու խումբին պատկանող Յասմիկ Աւտայեան իր երաժշտական ասպարէզին ընթացքին ունեցած է բազմաթիւ մենահամերգներ եւ մասնակցած է կարեւոր փառատօներու: Իսկ լիբանանահայ թէ լիբանանեան բեմի ծանօթ դաշնակահարուի Ջելա Մարկոսեան, որ ներկայիս իր մասնագիտութիւնը կը շարունակէ Երեւանի Պետական երաժշտանոցին մէջ, անգամ մը եւս իր կատարումով տպաւորեց:

Նուագահանդէսին առաջին բաժինով Յասմիկ Աւտայեան նուագեց Պալի «Չակոնա», ապա անոր միացաւ Ջելա Մարկոսեան՝ մատուցելու Պեթովի «Մոնաթի 7»: Յայտագիրին երկրորդ բաժինը սկսաւ Երուսաղ Երկանեանի «Քմայրներու գերի» ջութակի գեղեցիկ-ձենանուագով, որուն յաջորդեցին վոյգ արուեստագէտներուն կողմէ հայկական թէ միջազային դասական երաժշտութեան ստեղծագործութիւններու ներկայացումը: Յայտագիրին մէջ տեղ գտած էին Պրահմի «Սկերքօն», Պոլի «Նիկոն»ը, Ա. Խաչատուրեանի «Ատաճօն», Մարցնի «Մտորում»ը, Պեթովի «Ռոմանս», էֆ - տիւր»ը եւ Իպլիի «Մալուրթա. էյչ - մոյ»ը:

Իրենց բարձրորակ եւ արհեստավարժ մակարդակի կատարումներուն աւարտին Ջելա Մարկոսեան եւ Յասմիկ Աւտայեան մեկնաբանեցին հասաւոր Աւետիսեանի «Սաունցիներու պար»ը եւ Կոմիտասի «Կոունկ»ը՝ արժանանալով ներկաներուն շերտ գնահատանքին:

**Panasonic ideas for life**






# Մշակութային էջ

## «ՍԸՐՍՈՔ» ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՊԱԾ 24ՐԴ «ԱՇՆԱՆԱՅԻՆ ՍԱԼՈՆ»Ը

Հովանավորությամբ փոխ վարչապետ Իսամ Ֆարհասի եւ կազմակերպչությամբ «Սըրսոք» թանգարանի տնօրէնութեան, այս տարուան 24րդ «Աշնանային սալոն»ի բացումը տեղի ունեցաւ 3 Դեկտեմբերի երեկոյան: Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս կազմուած է յատուկ դատական կազմ՝ արուեստի գործերու ընտրութիւնները կատարելու համար: Դատական կազմին անդամներն են՝ փրոֆ. Ճոն Քարգուէլ (նախագահ), Սիլվիա Աճմեան, Ժաք Ասուատ, Նազիհ Նաթէր, Փիեռ Նուրի, Ռամզի Սալիտի, Ասսէ Սալամ, Հինտ Սըննո եւ Ժոզէֆ Քարրապ:



«Շրեյտակային ժպիտ», գործ՝ Շուրի Շեքերաճանի

Դատական կազմի անդամներուն անունները արձանագրեցինք պարզ աչք պատճառով, որ անոնք այս անգամ աւելի բնականորէն եւ դժուարահաս զտնուած են իրենց ընտրութիւններուն մէջ: Ներկայացուած 186 կերպարուեստագէտներու 407 գործերէն ընտրուած են 83 կերպարուեստագէտներու 104 ստեղծագործութիւններ միայն: Մեր կարծիքով, ցուցադրութեան արժանացած գործերուն մէջ կարեւոր մասը եւս կարելի էր մարդկային կերպարները: Այնուամենայնիւ մակարդակը ապահովուած կը թուէր ըլլալ:

Դատական կազմը, ըստ երեւոյթին, քանդակի պարագային աւելի խտտապահանջ գտնուած էր եւ որակի իմաստով արդիւնքը ակնբերելի էր: Առանձնապէս ուշագրաւ էին հետեւեալներուն գործերը. Ջաւէն Նուրչեան, Մոնա Սաուտի, Մկրտիչ Մազմանեան, Նիքոլ Պերթոն, Սալիտալա Լըպպոս եւ այլն: Քանդակներու կողքին կային նաեւ արուեստի գեղանկարներ, որոնց մէջ առանձնապէս (երեք ստեղծագործութիւններով) ուշագրութեան արժանի են Անիթա Թոմպիլեանի գործերը:

Թէեւ երէց գեղանկարիչներէն հոյլ մը ցուցահանդէսին վարկը կը պահէր իր բարձրութեան վրայ, սակայն տաղանդաւոր եւ համեմատաբար երիտասարդներու գոյութիւնը աւելի քաջալերական է մեզի համար: Անոնք

«Սըրսոք» թանգարանը իր կազմակերպած «Աշնանային սալոն» տարեկան ցուցահանդէսով ցարդ միակ լուրջ եւ հետեւողական հիմնարկը կը մնայ Լիբանանի մէջ: Ցուցահանդէսը կը շարունակուի մինչեւ 17 Յունուար: Ցանկալի պիտի ըլլայ, որ մեր ուսանողութիւնն ու մասնաւորաբար արուեստի աշակերտները այցելեն այս խիստ շահեկան ցուցահանդէսը:

տին մասին: ամաստուածողութեամբ կը ձգտին կերտել ուրոյն գործեր, որոնք վաղուան Լիբանանի գեղանկարչութիւնը պիտի ներկայացնեն, ինչպէս՝ Հուրի Շեքերաճան, Փոլ Վիօ Քոտսի, Շարլ Անտրան, Շարլ Նուրի, Անթուան Մանուէր եւ այլն:

Յուշահանդէսը իր ամբողջութեան մէջ ընդհանուր գաղափար մը կը տայ մեզի ժամանակակից Լիբանանի կերպարուեստը:

«Սըրսոք» թանգարանը իր կազմակերպած «Աշնանային սալոն» տարեկան ցուցահանդէսով ցարդ միակ լուրջ եւ հետեւողական հիմնարկը կը մնայ Լիբանանի մէջ: Ցուցահանդէսը կը շարունակուի մինչեւ 17 Յունուար: Ցանկալի պիտի ըլլայ, որ մեր ուսանողութիւնն ու մասնաւորաբար արուեստի աշակերտները այցելեն այս խիստ շահեկան ցուցահանդէսը:

Ս. Ճ.

**«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶՄԱՅԻՆ ԹԻԻԵՐԸ**  
-ԱԶԳԱԿ»Ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:



«Ալի Պապա իր պարանքին դիմաց», գործ՝ Սալիտալա Լոպպոսի

## ԿՆՈՋ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

«Սարգիս Խաչենց» հրատարակատունը (որ մինչեւ այսօր կը շարունակէ իր կենսական առաքելութիւնը) այլոց շարքին հրատարակած է նաեւ «Պոլ Գգելի ժողոված գրոյցները» Օկիւստ Ռոտենի արուեստին մասին: Իր շահեկանութեան եւ հետաքրքրականութեան համար, այս հատորիկէն ստորեւ կ'արտատպենք «Կնոջ գեղեցկութիւնը» բաժինը:

Պիրոնների կալուածքը, որ մինչեւ վերջերս Սաքըէ Քէօրի մենաստանն էր, ինչպէս յայտնի է, այսօր գրադեցնում են վարձակալները, որոնց թուում է նաեւ արձանագործ Ռոտենը:

Վարպետը ուրիշ արուեստանոցներ էլ ունի Մետոնում ու Փարիզում՝ Մարմարների Պահեստում, բայց նախապատուութիւնը տալիս է այս մէկին:

Իսկապէս, դա՛ իւրաքանչիւր արուեստագէտի երազած կացարանն է: «Մտածողի» հեղինակն այնտեղ գրադեցնում է ճերմակ երեսապատումով, բարձր, ընդարձակ մի քանի սրահ՝ յարգարուած հրաշալի ծեփածոներով ու ոսկէ գարդագծերով:

Այն սրահը, որտեղ աշխատում է, բոլորածեւ է, բարձր լուսամուտ-դուները բացուած են հրաշալի պարտէզի վրայ:

Այս հողակտորը երկար տարիներ անինամ է մնացել: Բայց վայրի խոտերի արանքից դեռ նկատուած են տոսախների նախկին շարքերը, որ երիզում էին ծառուղիները, արտասովոր որթատուկների տակ երեւում են կանաչածածկ ձողապատ տաղաւարները. ամէն գարնան ծաղկամբերին դարձեալ յայտնուած են վառվռուն ծաղիկներ դալար սիգախոտերի մէջ: Ոչ մի բան այնքան հրաշալիօրէն թախծալից չէ, որքան մարդու ստեղծածի աստիճանական վերացումը ազատ բնութեան ներքոյ:

Պիրոնների կալուածքում Ռոտենը օրուան մեծ մասը համարեալ գծանր-կարելով է անցկացնում:

Նրա համար հաճելի է վանականի այս մենարանում առանձնանալ երիտասարդ, գեղեցիկ կանանց մերկութեան ներկայութեամբ եւ մատուցել անթիւ-անհամար ճեպակարների վերածել իր առջեւ ընդունած նրանց ճկուն կեցուածքները:

Այնտեղ, ուր կոյսերն իրենց դաստիարակութիւնն էին ստանում սուրբ միանձնուհիների հսկողութեամբ, գործը արձանագործը ոգեւորուած մեծարում է արտաքին գեղեցկութիւնը, եւ արուեստի հանդէպ ունեցած կիրքը վստահաբար նոյնքան ջերմեանով է դառնում, որքան այն բարեպաշտութիւնը, որով դաստիարակչութեան էին Սաքըէ Քէօրի սաները:

Մի երեկոյ միասին նայում էինք նրա էրիւտների շարքերից մէկը, եւ ես հիանում էի ներդաշնակ արապեքներով, որոնց միջոցով նա թղթին էր յանձնել մարդկային մարմնի զանազան կռուցիները:

Մէկ շարժումով արուած ուրուագծերն արտայայտում էին պոռթկուն կամ նուազուկ շարժումներ, եւ նրա բնամտքը, որ դարձեալ յայտնուում էր գծերի վրայ, լսելով շատ նուրբ մշուշով էր պատում բնօրինակի հմայքը:

Իր գծանկարներն ինձ ցոյց տալու ժամանակ մտաբերում էր բնորոշներին, որոնց պատկերել էր, ու ամէն վայրկեան բացականում էր.

«Օ՛, սրա ուսերը, որքան հմայք: Կատարեալ գեղեցկութեան կոր է... Շատ ծանր է գծանկարս... Բազմիցս փորձել եմ... բայց... Ահա, երկրորդ փորձը՝ նոյն կիւնն է: Սա աւելի է մօտ... մինչդեռ... Բայց նայէք այս մէկին կուրծքը, ի՛նչ սքանչելի կորութիւն է, համարեա անիրական նրբագեղութիւն: Իսկ այս միւսի կոնքերը. զմայլելիօրէն այնքան են: Եւ որքան զարմանալի կերպով են մկաններն ամփոփուած արտաքին փափուկ գծերի մէջ: Սրա առջեւ պէտք է խոնարհուել:

Նրա հայեացքը կորչում էր այդ յուշերի մէջ, ասես արեւելցի յայտնուել էլ Մոհամէտի Պարտէզում:

Վարպետ, հարցրի նրան, հեշտութեամբ էք գտնում գեղեցիկ բնորոշները: Այո:

Նշանակուած է՝ մեր միջավայրի համար հազուագիւտ է:

Ոչ, ի հարկէ:

Ու երկար ժամանակ է պահպանուած:

Արագ է փոփոխուում: Բնաւ չէի ասի, որ կիրք բնութեան պէս անընդհատ փոփոխուում է արեւի մայր մտնելու հետ, բայց համեմատութիւնը հա-

մարեա ճիշդ է: Իսկական երիտասարդութիւնը, այսինքն՝ կուսական արբուածքը, երբ մարմինն ամբողջովին նոր աւելիով լցուած՝ ի մի է գալիս իր սլացիկ հպարտութեան մէջ ու վախուճորած, ասես ձայն է տալիս սիրուն... Այս ժամանակահատուածը միայն մի քանի ամիս է տեւում:

Նոյնիսկ մայրութեան ձեւափոխումների մասին չիօսելով՝ տենչանքից ծնուած յոգնութիւնը եւ տենդագին կիրքը արագօրէն թուլացնում են հիւսուածքները եւ նուազեցնում գծերը: Երիտասարդ աղջիկը կին է դառնում: Սա գեղեցկութեան ուրիշ տեսակ է, նոյնիսկ աւելի հրաշալի տեսակ, բայց պակաս անաղարտ:

Իսկ չէ՞ք կարծում, որ անտիկ գեղեցկութիւնը մեր օրերի գեղեցկութիւնից շատ աւելի կատարեալ էր, ու ժամանակակից կանայք անգոր են հաւասարուել նրանց, ովքեր բնորոշում էին Ֆիտիասի համար:

Ամենեւին:

Սակայն յունական վեներաների կատարելութիւնը...

Այն ժամանակուան արուեստագէտները աչքեր ունէին տեսնելու համար, այնինչ այսօրուան արուեստագէտները կոյր են, ահա ամբողջ տարբերութիւնը: Յոյն կանայք գեղեցիկ էին, բայց նրանց գեղեցկութիւնը յատկապէս բուն էլ դրել նրանց պատկերող քանդակագործների մտածողութեան մէջ:

Այսօր էլ հէնց այդպիսի կանայք կան: Նախ եւ առաջ Հարաւային Եւրոպայի կանայք: Օրինակ, ժամանակակից իտալուհիները պատկանում են միջերկրական նոյն տիպին, ինչ Ֆիտիասի բնորոշները: Այս տիպարի հիմնական յատկանիշը ուսերի եւ կոնքերի հաւասարաչափ լայնութիւնն է:

Իսկ երբ բարբարոսները ռոմանական երկրներ ներխուժեցին, ձուլումը չազդեց՝ հին գեղեցկութեան վրայ:

Ո՛չ, Ենթադրենք, թէ բարբարոս ցեղերն այնքան էլ գեղեցիկ չէին, պակաս համաչափ էին, քան միջերկրական ցեղերը, ինչը շատ հաւանական է, բայց ժամանակը սրբազրել է արեան խառնուրդների հետեւանքով առաջացած թերութիւնները եւ վերականգնել նախկին տիպարի ներդաշնակութիւնը:

Գեղեցիկի եւ տգեղի ձուլումից վերթում այդթող միշտ գեղեցիկն է. աստուածային օրէնքով բնութիւնը շարունակ վերադառնում է լաւագոյնին, անընդհատ կատարելութեան է ձգտում:

Միջերկրականի տիպարի կողքին, ի դէպ, գոյութիւն ունի հիւսիսային տիպարը, որի թուին են պատկանում շատ ֆրանսուհիներ, ինչպէս նաեւ գերմանական ու սլաւոնական ցեղերի կանայք:

Այս տիպարին յատկանշական են լայն կոնքերը եւ նեղ ուսերը. դա այն կազմուածքն է, որ, օրինակ, տեսնում ենք Ժան Կուտոնի յաւերժահարսերի դէպքում, վաթթի «Փարիսի վճիռը» կտաւում վեներայի «Հուտոնի Տիանայի» պարագայում:

Բացի այդ, կուրծքն ընդհանրապէս առաջ է մղուում, մինչդեռ հին եւ միջերկրական տիպարների կրծքավանդակը, ընդհակառակն, ուղիղ է պատկերուում:

Ճիշդն ասած, մարդկային բոլոր տիպարները, բոլոր ցեղերը իրենց գեղեցկութիւնն ունեն: Մնում է յայտնաբերել:

Մեծագոյն հաճութիւն նկարեցի բաժնիտիպի փոքրամարմին պարուհիներին, որոնց վերջերս իրենց տիրակալի հետ Փարիզ էին եկել: Նրանց մարմնի նուրբ անդամների մանրիկ շարժումները արտասովոր ու հրաշալի գրաւչութիւն ունէին:

Էթիւտներ եմ արել ճափոնցի դերասանուհի Հանաբոյից: Բոլորովին ճարպ չունի: Մկանները մասնատուած են եւ ցցուն, ինչպէս Ֆոքսթերիէ կոչուած փոքր շներինը. նրա ջլիւրն այնքան ամուր են, որ յօդերը, որոնց ամրացած են դրանք, անդամների նոյն չափն ունեն: Նա այնքան ուժեղ է, որ կարող է մէկ ոտքի վրայ կանգնել որքան կամենայ՝ բարձրացնելով միւս ոտքը ուղիղ անկեան տակ իր դիմաց: Այս դիրքով նա նման է հողի մէջ արմատներ գցած ծառի: Ուրեմն, նա եւրոպացի կանանցից լիովին տարբերուում է մարդկային կառուցուածքով ու միաժամանակ շատ գեղեցիկ է իր արտակարգ ուժով:


ՓՈԼ ԿՁԷԼ  
Շար.ը՝ էջ 8



«Արթնացում», գործ՝ Օկիւստ Ռոտենի




«Տանայիտ», գործ՝ Օկիւստ Ռոտենի



«Բաժնիտիպի պարուհի», գործ՝ Օկիւստ Ռոտենի







ԱԿՆԱՐԿ

ԱՊՐԻՔ, ՏՂԱՔ

Խորագիրը հասարակայն կը վերաբերի Հ. Մ. Լ. Մ. Ի ֆուտբոլի մարզիկներուն և համակիրներուն: Ոչ թէ որովհետեւ եղանակի առաջին յաղթանակը արձանագրեցինք, այլ՝ որովհետեւ երէկ Պուրճ Համուտի դաշտին վրայ տեղի ունեցած Սաժէսի դէմ մրցումին ներկայ էր պայքարի ոգին:

Տակաւին շարքը մը առաջ, այս նոյն սինակներէն կը խայտառակէինք զանոնք, կը դատապարտէինք անոնց պայքարի ոգին բացակայութիւնը: Կրնայ ըլլալ, որ շատեր դժգոհ մնացին այդ կարծիքէն, բայց նոյն այդ դժգոհները պիտի գիտնան, լաւ պէտք է գիտնան, որ երբ կ'անցնին չափն ու սահմանը, մամուլը իր ըսելիքը ունի, պէ՛տք է ունենայ, պիտի՛ ունենայ: Եւ ոչ միայն մարզական մեր կեանքին մէջ, այլեւ քաղաքական, ազգային ու բոլոր մարզերուն պարագային, «Այդակ» եղած է անպիշող եւ բռնուքնադատող՝ թերի ու խոցելի բոլոր երեւոյթներուն նկատմամբ:

Բայց նոյն այս թերթը ողջունած, փայտալուծ, պանծացուցած է նաեւ բոլոր այն երեւոյթները, որոնք պէտք է արժանանան այդ գնահատանքին: Ա՛յս է մամուլին պարտականութիւնը. անաչառ ըլլալ, մատնանշել թէ՛ խոցելի, թէ՛ դրակաւ երեւոյթները:

Ահա ա՛յս է պատճառը, որ քանի մը օր առաջ մենք աննորոգ կը գտնուէինք (եւ պիտի գտնուէինք մի՛շտ, երբ կարիքը զգացուի), իսկ այսօր կ'ողջունենք մեր մարզիկներն ու համակիրները: Եւ այո՛, դարձեալ կ'ըսենք մեր տղոց՝ ապրի՛ք, որովհետեւ ոչ թէ պարկապէս յաղթեցիք, այլ՝ որովհետեւ ամբողջ 90 վայրկեան Հ. Մ. Լ. Մ. ականի, հայրն ի վայել կամքով պայքարեցաք դաշտին վրայ, ոգի ի բռնի «կրունկեցաք» գնդակ հայտնեցիք համար: Ուրեմն երբ փաստօրէն կա՛յ պայքարի ոգին, ապա անխուսափելի է յաղթանակը:

Ինչ կը վերաբերի մեր համակիրներուն, անոնք անգամ մը եւս ապացուցեցին, որ իրենք տէր կը մնան այս խումբին, նոյնիսկ եթէ ան կը գտնուի դասաւորման արհեստի վերջին դիրքին վրայ: Հ. Մ. Լ. Մ. Ի հոծ համակիրները ներկայ գտնուեցան թրիպիներուն մէջ, քաջայերեցին իրենց մարզիկները, գիտակցեցան իրենց անփոխարինելի դերին եւ բնականաբար իրենց անուրանալի բաժնիւր ունեցան յաղթանակի կերտման մէջ:

Կը մնայ, որ այս երթը շարունակուի յառաջիկայ մրցումներուն եւս, եւ դասաւորման արհեստի մէջ հետզհետէ յառաջիադաք արձանագրենք: Եւ վստահ ենք, որ կ'արձանագրենք եւ զէջ քանի մը դիրք կը բարձրանանք, մեր ետին ձգելով առնուպն հինգ խումբեր, որովհետեւ ինչպէս նախապէս հաստատեցինք, 12ին մէջ եօթը խումբեր կան, որոնց մէջ մենք թէ՛ մեր ունեցած տարրերով, թէ՛ մեր յատկացուցած ներթափանցով, թէ՛ մարզիկներուն նկատմամբ ցուցաբերած մեր հոգածութեամբ պէտք է ըլլանք լաւագոյնը: Եւ այս բոլորը դիւրաւ կրնան ըլլալ, պէ՛տք է ըլլան, պիտի՛ ըլլան, եթէ երկրուան մնացած պայքարի ոգի ցուցաբերուի: Իսկ այդ ոգին չցուցաբերելու իրաւունք չունի ոեւէ Հ. Մ. Լ. Մ. ական:

Անգամ մը եւս կ'ողջունենք երէկուան յաղթանակին պայքարի ոգին, անշուշտ առանց մոռնալու նաեւ, որ կը պահանջենք յարատեւութիւն, յանուն մեր խումբին, յանուն բոլորին արձանապատուութեան:

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Լ.Մ. ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԵՂԱՆԱԿԻ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան 7րդ հանգրուանին, երէկ կէսօրէ ետք Պուրճ Համուտի Քաղաքային Վարչական Վարչութիւնը վրայ Հ.Մ.Լ.Մ. Ի ֆուտբոլի խումբը արձանագրեց եղանակի իր առաջին յաղթանակը, 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնելով Սաժէսը:

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան 7րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.  
Հ.Մ.Լ.Մ. - Սաժէս 2 - 1  
Նըժմէ - Թատամոն Սուր 4 - 0  
Շապապ Սահէյ - Սալամ 3 - 3  
Հ.Մ.Մ. - Մապարրա 1 - 1  
Սաֆա - Օլիմպիք 0 - 2  
Անսար - Ահո 0 - 1

Ստորեւ՝ դասաւորումը (փակագիծին մէջ նշուած է ճոր հանգրուանին խումբերուն գրաւած դիրքերը).  
3. Հ. Պ. ՆՇ. ՍՏ. ԿԵՏ  
1.- Նըժմէ (1) 6 1 0 22 5 19  
2.- Ահո (2) 6 1 0 14 4 19  
3.- Օլիմպիք (3) 5 1 1 11 6 16  
4.- Սաֆա (5) 2 3 2 8 11 9  
5.- Թատամոն (4) 3 0 4 6 9 9  
6.- Անսար (6) 2 2 3 9 10 8  
7.- Մապարրա (8) 1 4 2 11 11 7  
8.- Սաժէս (7) 2 1 4 7 12 7  
9.- Հ.Մ.Մ. (9) 2 1 4 6 13 7  
10.- Սահէյ (10) 1 3 3 7 9 6  
11.- Սալամ (11) 1 2 4 9 13 5  
12.- Հ.Մ.Լ.Մ. (12) 1 1 5 9 16 4

Մրցումին երեք կողմերն ալ նշանակուեցան Ա. կիսախաղին, իսկ Բ. կիսախաղին երկուստեք կոլի առիթներ վրիպեցան:  
18րդ վայրկեանին, Հ.Մ.Լ.Մ. Ի յառաջապահ Արթուր Քոչարեան սքանչելի եւ զօրաւոր հարուածով մը ցնցեց կանաչներուն բերդին ուռկանը, «օղբ հանելով» թրիպիները:

Ստորեւ՝ 8րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.  
ՇԱՔԱԹ, 27 ԴԵԿՏԵՄԲԵՐ ԺԱՄ ԳԱՇՏ  
Հ.Մ.Լ.Մ. - Շապապ Սահէյ 2:15 Պուրճ Համուտ  
Անսար - Նըժմէ 8:30 Սալամ

Ստորեւ՝ 8րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.  
ԿԻՐԱԿԻ, 28 ԴԵԿՏԵՄԲԵՐ  
Ահո - Սաֆա 2:15 Ահո  
Սաժէս - Հ.Մ.Մ. 2:15 Պուրճ Համուտ  
Սալամ - Մապարրա 2:15 Թրիպուի  
Օլիմպիք - Թատամոն Սուր 4:45 Պէյրուք

Ուր վայրկեան ետք, Փոլ Ռըսթոմ ազատ հարուածի մը վրայ նշանակեց Սաժէսի հասարակութեան կոլը: Նախ պէտք է ըսել, որ գործուած «ֆաուլ»ը անտեղի էր, ապա քաշուած «պատը» եւ բերդապահը ունեցան իրենց սխալի բաժնիւր:

34րդ վայրկեանին, Յակոբ Տօնապետեան յաջող մէկ-երկու մը կատարելէ ետք Արթուր Քոչարեանի հետ, նշանակեց Հ.Մ.Լ.Մ. Ի յաղթանակի կոլը: Ուշագրաւ էր Արթուրի տուած «պրապիլական» փոխանցումը, որ այս եղանակին երրորդն է, որ կոլի կը վերածուի:

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 17րդ հանգրուանի մրցումներուն, Մանչեսթըր Եունայթըտ 2-1 արդիւնքով յաղթական վերադառնալէ ետք Թորքենհամի դաշտէն, գրաւեց ընդհանուր դասաւորման պարագուծի դիրքը, մէկ կէտի առաւելութեամբ գերապանցելով Արսենալը (2րդ) եւ Չելսին (3րդ), որոնք ունին 39ական կէտ:

Մրցումին 62րդ վայրկեանին դաշտներկայացաւ Վարդան Ղապարեան, որ փոխարինեց այս եղանակով յաջող մէկ-երկու մը կատարելէ ետք Արթուր Քոչարեանի հետ, նշանակեց Հ.Մ.Լ.Մ. Ի յաղթանակի կոլը: Ուշագրաւ էր Արթուրի տուած «պրապիլական» փոխանցումը, որ այս եղանակին երրորդն է, որ կոլի կը վերածուի:

Ստորեւ՝ 8րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.  
ՇԱՔԱԹ, 27 ԴԵԿՏԵՄԲԵՐ ԺԱՄ ԳԱՇՏ  
Հ.Մ.Լ.Մ. - Շապապ Սահէյ 2:15 Պուրճ Համուտ  
Անսար - Նըժմէ 8:30 Սալամ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 17րդ հանգրուանի մրցումներուն, Մանչեսթըր Եունայթըտ 2-1 արդիւնքով յաղթական վերադառնալէ ետք Թորքենհամի դաշտէն, գրաւեց ընդհանուր դասաւորման պարագուծի դիրքը, մէկ կէտի առաւելութեամբ գերապանցելով Արսենալը (2րդ) եւ Չելսին (3րդ), որոնք ունին 39ական կէտ:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Սարգիս Ծախիբեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի Ս. Զառամից Մանկանց եկեղեցոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները .

Սարգիս Ծախիբեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի Ս. Զառամից Մանկանց եկեղեցոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները .

Սարգիս Ծախիբեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի Ս. Զառամից Մանկանց եկեղեցոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները .

- Տր եւ տիկին Զոհրապ Սուլեյան 15,000 Լ. ռ., տիկին Անոյշ Պէշեան 10\$, տր եւ տիկին Սիբայել Խաչերեան 10\$, Արքահամ Վարձապետեան 15,000 Լ. ռ., Վարդապետեան 15,000 Լ. ռ., տր եւ տիկին Եփրեմ Զոպան Գրիգորեան 10,000 Լ. ռ., Հրանուշ Սճարեան 10,000 Լ. ռ., տր եւ տիկին Անդրանիկ Խարլաթեան 20,000 Լ. ռ., Վարդապետ Թորոքեան 20,000 Լ. ռ., տր եւ տիկին Անդրանիկ Պողոտեան 10,000 Լ. ռ., Պօղոս Էքմէքեան 10,000 Լ. ռ., տոքթ. Վարդապետ Էքմէքեան 30,000 Լ. ռ., Սմբատ Զումրույեան 20,000 Լ. ռ., Հրայր Գապիս 20,000 Լ. ռ., տր եւ տիկին տոքթ. Նազարեթ Արքահամեան 50,000 Լ. ռ., տոքթ. Թափան 5,000 Լ. ռ., Հռիփ-սիմեանց ուսուցչական կազմ եւ պաշտօնէութիւն 140,000 Լ. ռ., Հանգա Մահրու 30,000 Լ. ռ., Սիմօնեան ընտանիք 20,000 Լ. ռ., Սիլվա Մեքրոպեան 10,000 Լ. ռ., Բաֆֆի ճիւղեյեան 10,000 Լ. ռ., Էլիա Ծամմա եւ ընտանիք 20,000 Լ. ռ.:

Սարգիս Ծախիբեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի Ս. Զառամից Մանկանց եկեղեցոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները .

Սարգիս Ծախիբեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի Ս. Զառամից Մանկանց եկեղեցոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները .

ՊԱՏՔԵԹՊՈՒՆ ԱՐՁԱԿԱՆՑ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Լ.Մ. ՅԱՂԹԵՑ ԱՆՆԻՊԱԼԻՆ

Լիբանանի պատերազմի աղջկանց Ա. դասակարգի ախոյեանութեան 4րդ հանգրուանի մրցումներուն, անցեալ Շաբաթ օր, Հ.Մ.Լ.Մ. Ի ներկայացուցչական խումբը արձանագրեց եղանակի իր երկրորդ յաղթանակը, երբ Արքաեան Հ.Մ.Լ.Մ. - Մարզամշակութային համալիրի «Թնճուկեան» դաշտին վրայ 81 - 65 (կիսախաղ՝ 41 - 27, ի նպաստ Հ.Մ.Լ.Մ. Ի) պարտութեան մատնեց Աննիպալ Չախիէն:

3րդ քրթբերէն ետք (62 - 36, ի նպաստ Հ.Մ.Լ.Մ. Ի) Հ.Մ.Լ.Մ. Ի մարպիչ Սեդիկ Չիփուքի դաշտ ներկայացուց իր պահեստի մարպիչները, նկատի ունենալով որ կէտերու տարբերութիւնը հետզհետէ կը բարձրանար:

Մրցումին լաւագոյն կոլսորբորը հանդիսացաւ ռուս վերա վեդրովա, որ նշանակեց 31 կէտ: Խմբապետ Սէնտի Սիմոնեան նշանակեց 12 կէտ:

Ստորեւ՝ դասաւորումը՝ 4րդ հանգրուանի մրցումներէն ետք.  
ՄՐՑ. Յ. Պ. ԿԵՏ  
1.- Սաժէս Սար Տումէթ 4 4 0 12  
2.- Անդրանիկ Պէյրուք 3 3 0 9  
3.- Հ.Մ.Լ.Մ. 3 2 1 7  
4.- Էօ. Էն. Պէ. 3 2 1 7  
5.- Աննիպալ Չախիէ 4 1 3 6  
6.- Ռիատի Պէյրուք 4 0 4 4  
7.- Անդրանիկ Սին Էլ Յիլ 3 0 3 3  
8.- Սատաքա 0 0 0 0

ՍՏՈՐԵՒ՝ Հ.Մ.Լ.Մ. Ի ներկայացուցչական կազմին կատարելիք երթի մնացեալ մրցումներուն յայտագիրը.

ԿԻՐԱԿԻ, 4 ՅՈՒՆԻՍԵՐ 2004 ԺԱՄ ԳԱՇՏ  
Ռիատի Պէյրուք - Հ.Մ.Լ.Մ. 20:00 Ռիատի

ՉՈՐԵՔԱԲԹԻ, 7 ՅՈՒՆԻՍԵՐ 2004  
Անդրանիկ Պէյրուք - Հ.Մ.Լ.Մ. 18:00 Տեմիրճեան

ՉՈՐԵՔԱԲԹԻ, 14 ՅՈՒՆԻՍԵՐ 2004  
Հ.Մ.Լ.Մ. - Անդրանիկ Սին Էլ Յիլ 20:00 Աղբալեան

● ԼԵՌՆԱԼԻԲԱՆԱՆԻ նահանգէն ներս տեղի ունեցող Լիբանանի Գ. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն, Հ.Մ.Լ.Մ. Աննիպալի աղջկանց կազմը անցեալ շաբաթավերջին յաղթանակ մը արձանագրեց 75 - 73 արդիւնքով պարտութեան մատնելով Ֆարայան:

ՄԱՐՁԻԿ  
ԻՐ ՏԱՐԻ, 2003  
ԹԻԻ 10 (256)  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ Հ.Մ.Լ.Մ. ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
«Մարպիչ» ի այս թիւով տեսնել՝  
• Խմբապետական «ՈՎ հայ արի»  
• Հաղորդագրութիւն - Հ.Մ.Լ.Մ. Ի Կեդրոնական Վարչութիւն  
• Հ.Մ.Լ.Մ. Ի Կեդրոնական Վարչութեան այցելութիւններ՝ ազգային կառոյցներ  
• Հ.Մ.Լ.Մ. Ի 85ամեակին նուիրուած եգիպտահայ միջ-ակմբային մրցաշարքը  
• Հ.Մ.Լ.Մ. Ի հիմնադրութեան օրերէն յուշեր (Ը) - Շաւարշ Քինյ. Մեքրապեան  
• Մեր Տեսակցութիւնները / Կոփամարտի փետուր կշիռի հայազգի աստղ՝ վախտանգ Տարչիւնեանի հետ  
• Չաքար Չորպանեան արձանացաւ Հ.Մ.Լ.Մ. Ի «Արտակարգ» պատուանշանին  
• Հ.Մ.Լ.Մ. - Ֆրանսի աշխոյժ առօրեան  
• Գործակցութեան յուշագիր՝ Հ.Մ.Լ.Մ. - Հ. Ա. Ս. Կ. Ի նուիրուած պատուական միութիւններուն միջեւ  
Ստանալու համար դիմել Համազգայինի գրախանութ: Սակ՝ 3000 Լ. ռ.:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
ԶԱՇԿԵՐՈՅՐ  
ՊԱՐԱՀԱՆԴԷՍ  
Երկուշաբթի, 5 Յունուար 2004ի,  
Երեկոյեան ժամը 9:30էն սկսեալ,  
BIEL PAVILLON ROYAL  
սրահին մէջ:  
ԵՐԳԱՀԱՆԴԷՍ  
Երեքշաբթի, 6 Յունուար 2004,  
Երեկոյեան ժամը 7:30ին  
UNESCO սրահին մէջ:  
ՏՈՍՏԵՐԸ ԿԸ ՎԱՃԱՌՈՒՆ  
Obelix գրախանութ, Ալթիլիսա - Promenade Ջալքա  
Համազգայինի «Լեւոն Շախաթ» կեդրոն  
Համազգայինի գրախանութ  
Տիպոքեթ Geka - Սթիւտիօ Վաչէ, Հաճըն:

